

Գիտությունը՝ խոցելի, սակայն գերակա ոլորտ

Հերթական նախաձեռնությունները պետք է նպաստեն գիտական մտքի հետագա զարգացմանը

Երեկ Ջերմուկի առաջին առողջարանում սկսվեց «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողովը: Այն կազմակերպվել էր ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի եւ Երեւանի ճարտարապետության ու շինարարության պետական համալսարանի ջանքերով:

ԵրՃՇՊՀ ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը նշեց, որ 1990—ական թվականների ճգնաժամային տարիներին գիտությունն ամենախոցելի ոլորտներից մեկն էր. «ՀՀ—ում մտավոր ներուժը ամենալուրջ ռեսուրսներից է, ուստի մենք պետք է փորձենք գտնել այն ճանապարհը, որի միջոցով հայաստանի պետական այրերը գիտության զարգացման համար կկարողանան ստեղծել իրավական դաշտ»: Նա ընդգծեց, որ անհրաժեշտություն է առաջացել քննարկել շուրջ երկու տարի գործող գիտության պետական կոմիտեի կատարած աշխատանքներն ու նախանշել նոր ուղղություններ: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կարեն Հայրապետյանը նշեց, որ «90—ական թթ. ճգնաժամի պայմաններում, երբ խնդիր կար գիտական նվաճումները, գիտնականներին պահել երկրում, մշակվեց եւ ներդրվեց ֆինանսավորման նոր ձև՝ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում, որը, փրկեց գիտությունը»:

Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային, եւ նպատակային—ծրագրային ֆինանսավորման նոր կարգերի ընդունումը թույլ կտա ներդնել պետության կողմից հատկացվող միջոցների փոշիացումը կանխող մեխանիզմներ: Կ. Հայրապետյանն անդրադառնալով ֆինանսավորման կարգերին, նշեց. «Բազային ֆինանսավորումը պետք է իրականացվի մրցութային կարգով, գիտակազմակերպչական եւ հիմնարար, կարելուրագույն կիրառական հետազոտական ծրագրեր իրականացնող գիտական կազմակերպությունները եւ գիտակրթական ենթակառուցվածքները պահպանելու եւ զարգացնելու, առանձին եզակի եւ կոլեկտիվ օգտագործման բնույթ ունեցող սարքավորումների ձեռքբերման նպատակով»:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավարն անդրադառնալով ֆինանսավորման նաեւ մյուս կարգերին, ավելացրեց, որ պայմանագրային ֆինանսավորումը պետք է վերածվի իրական դրամաշնորհային համակարգի: Այս կարգի ֆինանսավորումը կոչված է ՀՀ գիտության եւ տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում ապահովելու առանձին հետաքրքրություն ներկայացնող, արդիական խնդիրների լուծումը, որոնք կարող են նպաստել նոր գիտական հետազոտությունների ստեղծմանը:

Պետական նպատակային—ծրագրային ֆինանսավորումը պետք է իրականացվի համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում: Ըստ Կ. Հայրապետյանի՝ դրամաշնորհային համակարգի ներդրման հետ կապված ամենակարեւոր սկզբունքը անկախ փորձաքննության համակարգի ձեւավորումն է. «Մենք նախատեսել ենք, որ մինչեւ 2015—2016թթ. պետք է հասնենք այն համամասնությանը, որ գիտության ոլորտում պետբյուջեյի ֆինանսավորման 50 տոկոսը լինի բազային, 30—35 տոկոսը՝ նպատակային, մնացածը պայմանագրային ֆինանսավորումը»:

Թամարա ՄՈՒՐԱՂՅԱՆ

Գիտելիքահենք տնտեսություն՝ գիտության զարգացման ռազմավարության արդյունքում



2020թ. Հայաստանը եվրոպական գիտատեխնիկական տարածքում մրցունակ երկիր է լինելու

Մայիսի 7—ից Ջերմուկ քաղաքում մեկնարկած «Գիտության զարգացման հիմնահարցերը ՀՀ—ում» խորագրով գիտաժողովի նպատակներից մեկը շահագրգիռ քննարկումներ անցկացնելն էր, որոնց արդյունքում կատարված առաջարկները կնպաստեն գիտության առաջընթացին:

«2007թ. նոյեմբերին ընդունվեց գիտության զարգացման ռազմավարությունը, որտեղ նախանշված են այն բոլոր խնդիրները, որոնք առաջիկայում պետք է լուծենք: Մենք որոշել ենք ընդունել առաջիկա տասը տարվա ռազմավարությունը եւ հետագայում այն բաժանել հինգ տարվա 2—ական ռազմավարական ծրագրերի»,—գիտաժողովի ընթացքում ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Միջազգային համագործակցություն՝ հոգուտ գիտության

ԿԳՆ ԳՊԿ—ի ստեղծումից հետո ներդրվել են գիտական ծրագրերի եւ թեմաների մրցութային ու ծրագրային ֆինանսավորման համակարգեր, որոշակի աշխատանքներ են տարվել հայագիտության ոլորտում՝ բարձրացվել է գիտնականների աշխատավարձը՝ ավելի քան 75 տոկոսով: Ըստ Ս. Հարությունյանի՝ կոմիտեի ուշադրության կենտրոնում են հատկապես միջազգային կապերը. «Ստորագրվել են բազմաթիվ պայմանագրեր ու համաձայնագրեր: Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ պայմանավորվածությունն ենք ձեռք բերել համաֆինանսավորման տարբերակով ֆինանսավորել Հայաստանի գերակայությունից բխող նախագծերը: Ամենայն հավանականությամբ եկող տարվանից մեր հանրապետությունը նույնպես իր մասնաբաժինը կունենա միջազգային գիտատեխնիկական ծրագրերի ֆինանսավորման ոլորտում»:

Թեեւ ՀՀ—ում միջազգային համագործակցության առումով առաջընթաց է գրանցվել, այնուամենայնիվ, Ս. Հարությունյանը դա բավարար ցուցանիշ չի համարում. «Պետք է կարողանանք համագործակցել այնպիսի պետությունների հետ, ինչպիսին Չինաստանն է: Գիտության ոլորտում համագործակցելու նպատակով շուտով պայմանագիր կստորագրենք Չինաստանի հետ: Միջազգային համագործակցության ոլորտը լինելու է մեր ռազմավարության թիրախային ամենակարեւոր խնդիրներից մեկը»:

Ծրագրեր՝ ուղղված գիտության երիտասարդացմանը

«Թվում է, թե Հայաստանում երիտասարդ շունչ է մտնում գիտության ոլորտ: Սակայն այդ տպավորությունը միայն առաջին հայացքից է: Իրականում, նրանց գերակշիռ մասը ստանալով գիտական աստիճան, այդ ոլորտից դուրս է գալիս», – ասաց ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը: Վերջինս փաստեց, որ գիտության մեջ ընդգրկված թեկնածուների միջին տարիքը **52** է, իսկ դոկտորներինը՝ **70**. «**1993—2009**թթ. տվյալներով՝ գիտական թեմաների ղեկավարների կազմում փոփոխություն գրեթե չի գրանցվել: Ցավոք, թեմաներում քիչ թվով երիտասարդներ են ընդգրկված: Մենք ունենալու ենք հատուկ ծրագիր՝ գիտության երիտասարդացման ուղղությամբ, որը մեր ռազմավարության մեջ կարելու է որպես **դիրք** է **գրադեցնելու**: Իսկ ինչ վերաբերում է գիտական աստիճանի վկայական ստացածների թվին, ապա եթե աճը շարունակվի այնպես, ինչպես **1994—2008**թթ., ապա **2015**թ. մենք կունենանք տարեկան **100** թեկնածու»: Գիտության ոլորտ հիմնականում մտնում են ֆիզիկա—մաթեմատիկական, կենսաբանական, քիմիական գիտության աստիճան ստացածները: Սակայն նույնը չենք կարող ասել, ասենք, բժշկության, տնտեսագիտության ոլորտների վերաբերյալ: Իսկ գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ, գիտական եւ գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների անձնագրային տվյալներով՝ **2007** թվականին հանրապետության գիտնականների հանրապետական եւ օտարերկրյա գրախոսվող պարբերականներում հրատարակվել է **5569** հոդված, ստացվել է հեղինակային իրավունքի **181** վկայագիր, որից **3**—ը՝ օտարերկրյա պետություններում: Մի շարք գիտնականներ հրատարակած հոդվածների համար արժանացել են բարձր գնահատականի եւ մրցանակների ինչպես հանրապետությունում, այնպես էլ միջազգային ասպարեզում. վերջին **5** տարվա ընթացքում գիտության բնագավառի ներկայացուցիչներին շնորհվել է հանրապետության նախագահի **30** եւ **100** միջազգային մրցանակ:

ՀՀ—ում գիտության ոլորտի գերակայությունը դեռ հստակեցված չէ

«Գիտության վրա ծախսվող գումարի հիմնական մասը պետությունից է: Իսկ գիտությունը միայն պետական միջոցներով չի կարող լիարժեք զարգանալ: Այսօր ՀՀ—ում պետական բյուջեից ֆինանսավորվում են շուրջ **117** հիմնարկ, **6** պետական ծրագիր եւ ազգային արժեք ներկայացնող օբյեկտների պահպանման **3** ծրագիր: Գումարի գրեթե **40** տոկոսը բաժին է հասնում ՀՀ ԳԱԱ—ի ինստիտուտներին, մնացած մասը՝ հիմնարկներին, որոնց մեջ ընդգրկված են ճյուղային ինստիտուտներն ու բուհերը: Գիտության զարգացումն ավելի մեծ թափ կստանա, եթե մասնավոր հատվածը նույնպես շահագրգռվի գիտության արդյունքներով: Այդ տեսանկյունից ապագայում լուրջ հաջողություններ գրանցել չենք կարող: Այդ ուղղությամբ մեր ռազմավարության մեջ, ապագայում լուծելու համար, լուրջ խնդիրներ են նախատեսված», –նշեց Ս. Հարությունյանը:

Վերջինիս համոզմամբ՝ ներկա պայմաններում հիմնարար հետազոտություններ— կիրառական հետազոտություններ—ինովացիոն գործունեություններ կապը կարելի է խզված համարել. «Մեր ռազմավարական ծրագրում լուրջ ուշադրություն ենք դարձնում նյութատեխնիկական բազային, ենթակառուցվածքների թարմացմանն ու զարգացմանը: ՀՀ—ում գիտության ոլորտի գերակայությունը դեռ հստակեցված չէ: Մեր կառավարությունը շուտով նաեւ կհաստատի գերակայությունները, որից հետո մենք նաեւ առաջիկա մի քանի ամիսների ընթացքում կարձանագրենք այս կամ այն գերակայությանը վերաբերող խնդիրները»:

Հայագիտությունը՝ ստրատեգիական կարեւորագույն խնդիր

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի խոսքով՝ մեզ մոտ հայագիտությունը ռազմավարական կարեւորագույն խնդիրներից մեկն է: Այս ոլորտը, որի զարգացման համար միջոցներ չպետք է խնայել, լինելու է կոմիտեի ուշադրության կենտրոնում. «Ցավոք, մի շարք գիտական դպրոցներ մենք արդեն իսկ կորցրել ենք: Իսկ այսօր գործող դպրոցները պետք է փայփայենք եւ փորձենք զարգացնել»: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ս. Հարությունյանը նշեց, որ այսօր հայագիտությունը լուրջ անելիքներ ունի պատմամշակութային ժառանգությունը, լեզվական խնդիրների հետ կապված հարցերը ճիշտ մատուցելու տեսանկյունից. «ՀՀ—ում կան հայագետներ, ովքեր որոշ հարցերում ունեն լուրջ տարածայնություններ: Ելնելով մեր պատմական անցյալից, այս խնդիրը նաեւ քաղաքական լուրջ նշանակություն է ստանում: Այսօր ցանկանում ենք կարգավորել հայ—թուրքական հարաբերությունները, շատ խնդիրներ ունենք լուծելու, որոնք կապված են հայագիտության հետ»: Նա հավելեց նաեւ, որ մենք լեզվական շատ լուրջ խնդիր ունենք: Հայագիտությանը վերաբերող աշխատանքների գերակշիռ մասը տպագրվում է հայերեն. «Մինչդեռ, որպեսզի հայագիտությունը հասնի իր նպատակին, այդ ամսագրերը դրսում եւս պետք է ընթերցվեն: Իսկ դա պահանջում է օտար լեզուներով հրատարակվող հայագիտական հանդեսներ»: ՀՀ ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանը կարծում է, թե հայագիտության ամենամեծ խնդիրն այն է, որ այն գալիս է անցյալից, եւ ոչ ապագայից կամ ներկայից: Նրա հավաստմամբ՝ մենք պետք է ունենանք պատկեր, թե ապագայում ով եւ ինչպիսին ենք լինելու:

Իսկ գիտության զարգացման ռազմավարության ծրագրով՝ **2020**թ. ՀՀ—ն գիտելիքահենք տնտեսություն ունեցող, հիմնարար եւ կիրառական գիտական հետազոտությունների եւ մշակումների մակարդակով եվրոպական գիտատեխնիկական տարածքում մրցունակ երկիր է լինելու:

«Առանձնացվել են հետեւյալ թիրախները՝ կայուն զարգացում ապահովող համակարգ, գիտական ներուժի արդյունավետ վերարտադրանք, գիտական ենթակառուցվածքի արդիականացում, հիմնարար կիրառական հետազոտությունների խթանում, հայագիտության ոլորտի առաջնային զարգացում, միջազգային համագործակցության ինտենսիվացում»,—նշեց Ս. Հարությունյանը:

Թամարա ՄՈՒՐԱՆՅԱՆ

Նոր հայեցակարգ գիտության ոլորտում

Ճիշտ մարտավարությամբ կարելի է լուծել ցանկացած խնդիր

Ջերմուկ քաղաքում անցկացված գիտաժողովի վերջին նիստում քննարկվեց «ՀՀ գիտության աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգը» թեման: ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը տեղեկացրեց, որ ՀՀ գիտության աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգը ներկայացվել է ԿԳՆ քննարկմանը եւ, հաշվի առնելով հարցի կարեւորությունը, որոշվել է, որ այն պետք է ավելի կատարելագործվի: Այս տարվա օգոստոս—սեպտեմբեր ամիսներին այդ փաստաթուղթը վերջնական տեսք կստանա եւ կներկայացվի կառավարությանը:

Խաղի կանոնները պետք է սահմանի պետությունը

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ ատենախոսությունների հիմնական արդյունքների եւ դրույթների հրապարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ընտրության սկզբունքները հստակ ձեւակերպված չեն. «Գիտական աշխատանքներ հրատարակող ներկայիս ամսագրերի գերակշիռ մասը ցածրորակ է: Անբավարար է նաեւ ատենախոսությունների պաշտպանությունների հրապարակայնությունը: Ի՞նչն է մեզ խանգարում, որ պաշտպանությունից որոշ ժամանակ առաջ սեղմագրերը տեղադրվեն խորհուրդների կայքերում, որպեսզի ցանկացողները ստանան իրենց անհրաժեշտ ինֆորմացիան»: Անդրադառնալով մասնագիտական խորհուրդներին՝ Ս. Հարությունյանը նշեց, որ դրանց ձեւավորման մեխանիզմների ու չափանիշների հստակեցման անհրաժեշտություն է զգացվում. «Այսօր Հայաստանում գործում է 61 մասնագիտական խորհուրդ: Մինչդեռ գիտության մեջ ներառվածների թիվն էապես պակասել է, իսկ դա մտածելու տեղիք է տալիս՝ արդյոք մեզ պետք են այդքան մասնագիտական խորհուրդներ»: Գիտության ոլորտում կարեւորություն ունի նաեւ գիտական աստիճանաշնորհման համակարգում միասնական պետական քաղաքականության ձեւավորման խնդիրների լուծումը: Ս. Հարությունյանի խոսքով՝ պետությունն ամբողջ պատասխանատվությունը պետք է վերցնի իր վրա. «Ցանկացած համակարգ, որպեսզի բնականոն աշխատի, խաղի կանոնները պետք է սահմանի պետությունը, իրականացնի մեկ այլ մարմին, երրորդն էլ պետք է ստանձնի վերահսկողությունը: Բոլոր ֆունկցիաներն իրականացնելով՝ նույն մարմինը չի կարող բնականոն գործունեություն ծավալել»: Ըստ ԲՈՂ—ի նախագահի տեղակալ Լիլիթ Արզումանյանի՝ գիտական աստիճանաշնորհման համակարգում այսօր միակ խնդիրը հասարակության բարոյականության խնդիրն է, որը ոչ ոք չի կարող լուծել: Լ. Արզումանյանի համոզմամբ՝ պաշտպանությունը հրապարակումների հետ բացարձակ կապ չունի. «Գիտնականի աշխատանքը պաշտպանության պրոցեսով չի ավարտվում: Նրա գործունեությունը շարունակվում է, իսկ հրապարակումները, բնականաբար, կարող են լինել պաշտպանությունից հետո»: Ս. Հարությունյանը հավաստիացրեց, որ վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված բոլոր առաջարկները կներկայացվեն ՀՀ ԿԳ նախարարություն, որին կից ստեղծվել է հանձնաժողով: Վերջինի կազմում ընդգրկված են ԳԱԱ նախագահը, ԵՊՀ ռեկտորը, ԳՊԿ—ի նախագահը, շահագրգիռ այլ կառույցների ղեկավարներ:

Նորությունից վախենալ պետք չէ

ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանը հավաստիացրեց, որ արձարժված հարցերի լուծման համար պետք է կիրառել տեսական գիտելիք, իսկ գիտության կազմակերպման տեսակետից անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՄՆ—ի, Անգլիայի, Եվրոպայի փորձը. «Նոր խոսք է պետք ասել, որը չկա այդ պետություններում: Ցանկացած հարցի լուծում համաշխարհային մակարդակում պետք է նորություն լինի, իսկ դրանից վախենալ պետք չէ»:

Նշենք նաև՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գիտաժողովին զուգահեռ, նույն քաղաքում ընթանում էր նաև ԵրՃՇՊՀ ուսանողական երկրորդ գիտաժողովը, որի վերաբերյալ ՀՀ ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանն ասաց. «Այսօր Հայաստանում ուսանողական գիտաժողովները լայն տարածում չունեն, մինչդեռ դրանք մեզ համար սովորական երեւոյթ պետք է լինեն: Համենայն դեպս, ես ուրախ եմ, որ մենք ունենք մի երեւոյթ, որը որոշակի գործունեության շնորհիվ կվերածվի ավանդույթի»: Նա հավելեց նաև, որ գիտության զարգացման համար այսօր կան բավականին լուրջ հիմնադրույթներ:

Թամարա ՄՈՒՐԱՂՅԱՆ
Ջերմուկ—Երևան
12-05-2010

**ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԵՐԻ ԱՆՑՄԱՆ
ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ**

[ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ, Ջերմուկ](#)

Կրթության եւ գիտության նախարարության, Գիտության պետական կոմիտեի եւ ԵրՃՇՊՀ-ի նախաձեռնած «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանում» գիտաժողովի հիմնական նպատակն էր անդրադառնալ ոլորտին առնչվող հիմնահարցերին, հեռանկարներին եւ զարգացման ռազմավարությանը:

Գիտաժողովի առաջին օրը նվիրված էր ոլորտում ֆինանսական նոր կարգերի քննարմանը, մշակվող ռազմավարությանը: Իր ելույթում Գիտության պետական կոմիտեի ղեկավար **Կարեն Հայրապետյանը** նկատեց, որ պահպանելով ֆինանսավորման բազմաձևությունը՝ գիտության ոլորտում ֆինանսավորումը պետք է իրականացնել բացառապես մրցույթի կարգով եւ ծրագրային հիմնավորման սկզբունքներով: Նա առաջարկեց իրականացնել բազմաշերտ ֆինանսավորում՝ գիտակազմակերպչական եւ հիմնարար, կիրառական, հետազոտական ծրագրեր իրականացնող գիտական կազմակերպությունների եւ գիտակրթական ենթակառույցների պահպանման եւ զարգացման նպատակով, պայմանագրային, թեմատիկ ֆինանսավորումը վերածել իրական դրամաշնորհային համակարգի:

Ֆինանսավորման երկրորդ խումբը կոչված է գիտության եւ տեխնիկայի զարգացման գերակա ուղղություններում ապահովելու արդիական խնդիրների լուծում, որոնք կարող են հանգեցնել նոր գիտահետազոտությունների եւ գիտատեխնիկական մշակումների:

Ֆինանսավորման երրորդ խումբը նպատակային-ծրագրային է, որտեղ ընդգրկված թեմաներն առավել կիրառական բնույթ ունեն եւ նպատակաուղղված են պետության առաջադրած խնդիրների լուծմանը:

Հ.Գ.- Գիտաժողովում քննարկվող գործարարական ու ֆինանսական նոր կարգերի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացնենք «Ազգ»-ի հաջորդ համարներում:

ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵՆ ՄԻԱՅՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՁԵՐՄՈՒԿ-ԵՐԵԱՆ

Կրթության եւ գիտության նախարարության, գիտության պետական կոմիտեի (Գիտպետկոմ) նախաձեռնությամբ մայիսի 6-9 Ձերմուկում տեղի ունեցավ «Գիտության զարգացման հիմնահարցերը» խորագրով գիտաժողով: Նպատակն էր՝ քննարկել գիտության ոլորտի զարգացման հիմնախնդիրներն ու հեռանկարները: Քննարկվող հարցերից մեկն էլ ֆինանսավորման նոր կարգերն ու դրույթներն էին: Նախատեսվում է գիտության ոլորտում ֆինանսավորում իրականացնել երեք ուղղությամբ՝ բազային, պայմանագրային կամ թեմատիկ եւ պետական նպատակային-ծրագրային: (Ֆինանսավորման նոր կարգերը «Ազգը» ներկայացրել էր նախորդ համարում) Ֆինանսավորումը պետք է իրականացվի մրցութային կարգով: Ստեղծվելու է անկախ փորձագիտական խումբ:

«Գաղափարն այն է, որ ծրագրերը մրցութային կարգով ֆինանսավորվեն: Եթե ուզում ես փող ստանալ, պետք է գաղափար ներկայացնես, ապացուցես, որ գաղափարը տալու է լավ արդյունքներ: Ինչո՞ւ պետք է մի ինստիտուտ, որ հզոր մեջք ունի, ֆինանսավորվի, իսկ մյուսը, որը շատ ավելի լավ ծրագիր է ներկայացրել, բայց մեջքն ավելի թույլ է, չֆինանսավորվի: Ով շահում է՝ նա էլ ֆինանսավորվում է», ասաց Գիտպետկոմի ղեկավար **Սամվել Հարությունյանը** :

Անկախ փորձագետների խմբում ընդգրկված է **1200** մարդ: Նրանք ակտիվ գիտնականներ են, որ վերջին **5** տարվա ընթացքում պարբերաբար հոդվածներ են տպագրել: Անկախ փորձագիտական խմբի անաչառ գործունեության կապակցությամբ Հարությունյանն ասաց, որ մշակվել են հստակ դրույթներ:

«Կազմում ենք տվյալ ոլորտում գիտնականների ցուցակը: Թեմա ներկայացնող գիտնականի հետ համատեղ հոդվածներ հրատարակած, վերջին **5** տարվա ընթացքում նույն լաբորատորիայում աշխատած գիտնականները կազմից դուրս են գալիս: Ցուցակում կմնան **5-6** հոգի: Համակարգիչը պատահականության սկզբունքով կընտրի նրանցից երկուսին»:

Ֆինանսավորման նոր կարգերի կապակցությամբ նախատեսվում է կրճատել թեմատիկ թեմաների թիվը՝ **700**-ից հասցնել **150**-ի: Գիտպետկոմի ղեկավարը նկատում է, որ թեմատիկ ծրագրով տարեկան ֆինանսավորվում է **711** թեմա: «Այդքան օրիգինալ թեմա Հայաստանում հնարավոր չէ գտնել: Թեմաների գերակշռող մեծամասնությունը բազայինի կրկնությունն է: Ստացվում է, որ պետությունը նույն բանի համար կրկնակի է վճարում: Որոշեցինք թեմատիկ ծրագրերը վերածել գրանտայինի: Մեր գնահատմամբ՝ երկրում

հնարավոր է տարեկան **130** օրիգինալ ծրագիր իրականացնել: Հետեւաբար պետք է այդքան թեմա էլ ֆինանսավորվի: Դրանցից **100**-ը կլինեն պետական գրանտային, մնացածը՝ երիտասարդական գրանտային ծրագրեր՝ միջազգային համաֆինանսավորմամբ»: Հարությունյանը տեղեկացրեց, որ այդ նպատակով պատրաստվում են պայմանագրեր կնքել Իտալիայի եւ Չինաստանի հետ: Համագործակցության պայմանագրեր են կնքվել Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հետ: Ֆինանսավորման նոր կարգերի եւ փոփոխությունների կապակցությամբ «Ազգի» հետ գրույցում գիտաժողովի մասնակից գիտնականները ներկայացրին իրենց մտահոգություններն ու դժգոհությունները:

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ղեկավար **Համլետ Նավասարդյանի** կարծիքով, պետք է առաջնահերթ փոխել գիտության ոլորտում պատկերը եւ այնտեղ ներգրավել երիտասարդներին: «Այն, ինչ ասացին, շատ կարեւոր է, բայց դա չի ապահովի ռադիկալ փոփոխություններ: Գիտության ոլորտում միջին աշխատավարձը երկու անգամ ցածր է, քան այլ ոլորտներում: Այս փոփոխություններն ի՞նչ կբերեն: **50.000** դրամ կազմող աշխատավարձը կդառնա՝ **60.000**: Ի՞նչ էք կարծում, **60.000** դրամ աշխատավարձ ստացող երիտասարդ գիտնականը կարո՞ղ է զբաղվել գիտությամբ: Կան գրանտներ տարբեր երկրներից, բայց դա ժամանակավոր է, եւ չի կարող ապահովել զարգացում: Պետք է կառուցվածքային փոփոխություններ կատարել», ասաց նա:

Կենսաբանական գիտությունների թեկնածու, մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի փոխտնօրեն **Արսեն Առաքելյանն** էլ դժգոհ է, որ ֆինանսական ծրագիր ներկայացնելու ընթացքում թվային ցուցանիշների մասին չխոսվեց: «Թվային ցուցանիշների բացակայությունը ներկայացվածի ամենամեծ թերությունն էր: Այդ ժամանակ պարզ կդառնար՝ արդյոք ֆինանսական նոր ռազմավարությունը կգոյատևի՞»: Թեմաների կրճատման գաղափարը Առաքելյանը համարում է իրատեսական: «Թեմատիկին տրամադրվող ֆինանսավորումը բավարար արդյունք չէր տալիս: Արդյունքի տեսակետից այսպես ավելի ճիշտ կլինի, բայց հարց է ծագում՝ մարդիկ, որ թեմատիկ մասով դուրս են մնացել՝ ի՞նչ են անելու: Ինչպե՞ս են բաշխվելու գումարները: Սա նույնպես խնդիր է: Ելույթից հասկացա, որ գիտնականը պետք է ընտրություն կատարի՝ թեմատիկ, թե բազային: Բայց գիտնականը պետք է միանգամից մի քանի գործով զբաղվի եւ մի քանի ուղղությամբ աշխատի»:

Առաքելյանը նկատում է, որ անկախ փորձագիտական համակարգը լավ գաղափար է, սակայն մտավախություն ունի, թե հնարավոր կլինի՞ կյանքի կոչել: «Անհասկանալի են փորձագետների ընտրման չափանիշները: Կարո՞ղ է կամայական ինչ-որ մեկը դիմել, խնդրելով ընդգրկել իրեն փորձագիտական խմբի մեջ, թե՞ նրան են հրավեր ուղարկում: Այս հարցերը նույնպես բաց մնացին», ասաց նա:

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅՆԵԼ, ԽԹԱՆԵԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԶԱՐԳԱՅՆԵԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**

[ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ջերմուկ-Երևան](#)

Խթանել գիտության ոլորտում նորամուծությունները, ոլորտը երիտասարդացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան եւ ենթակառուցվածքները: Սրանք ու էլի բազմաթիվ խնդիրներ Գիտության պետական կոմիտեն մտադիր է լուծել մշակված տասնամյա ռազմավարության արդյունքում, որ շուտով կներկայացվի կառավարությանը:

Գիտության ոլորտում արդի խնդիրներից է երիտասարդության սակավաթիվ ներկայությունը: Գիտական գործունեությամբ զբաղվում **17.000** մարդ` ներառյալ բուհերի դասախոսները: **2009թ. 25-35** տարեկան գիտնականների թիվը աճել է: Թվում է, թե Գիտության մեջ պետք է զգացվի երիտասարդության շունչը, սակայն իրականությունն այլ է:

«Ստանում են թեկնածուական աստիճան եւ թողնում գիտությունը: Օրինակ՝ բժշկության ոլորտում թեկնածուական պաշտպանածների **10%**-ն էլ հետագայում գիտական գործունեությամբ չի զբաղվում: Ոլորտում նկատվում է ծերացում, քանի որ գիտնականների գերակշռող հատվածի տարիքային խումբը կազմում է **60-70: 1993-2009թթ.** թեմաների դեկավարների անունները չեն փոխվել, այդ առումով նույնպես երիտասարդացումը դանդաղ է ընթանում», ասաց Գիտության պետական կոմիտեի (Գիտպետկոմ) նախագահ **Սամվել Հարությունյանը** Ջերմուկում տեղի ունեցած «Գիտության զարգացման հիմնահարցերը» խորագրով գիտաժողովի մասնակից գիտնականներին:

Խնդիրներ կան գիտական հրապարակումների կապակցությամբ: Միջազգային վերլուծական կայքերում Հայաստանը տարեկան տպագրում է **500** գիտական հոդված: Համեմատություն կատարենք Թուրքիայի հետ. մինչև **2003թ.** գիտական հոդվածների տպագրությամբ Թուրքիան մեզանից հետ էր, սակայն ֆինանսավորման ծավալներն աճեցին, եւ գիտական հոդվածների թիվն անհամեմատ աճեց: Նա նկատում է, որ լավագույն աշխատանքները հրապարակվում են ֆիզիկայի ոլորտում, երկրորդ եւ երրորդ տեղերը կիսում են քիմիան եւ կենսաբանությունը:

«Կան սարքավորումների խնդիրներ: Կան հաստատություններ, որտեղ վերջին **20** տարվա ընթացքում տեխնիկայի թարմացում չի եղել: Բացակայում է գիտատեխնիկական միասնական ցանցը` ներառյալ էլեկտրոնային գրադարանների համակարգը: Հայ գիտնականները միջազգային ցանցից օգտվելու հնարավորություն չունեն»:

Գիտապետկոմի ղեկավարը մտահոգված է. նկատվում է կադրերի արտահոսք, **1991-2008** թթ. կրկնակի նվազել է գիտնականների թվաքանակը: «Գիտական կարիերայով զբաղվելու գրավչություն չկա»:

Ներկայացնելով խնդիրները, Սամվել Հարությունյանը համոզված է, որ ներկայացված ռազմավարության շնորհիվ մինչև **2020** թ. խնդիրները կլուծվեն: Նա առանձնացնում է **6** թիրախ, որոնք պետք է առաջնահերթ լուծում ստանան՝ ձեռավորել գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացում ապահովող համակարգ, բարձր որակավորում ունեցող երիտասարդների թվաքանակի կայուն աճի ապահովում, հետազոտությունների խթանում, հայագիտության ոլորտի առաջնային զարգացում, միջազգային գիտական եւ գիտատեխնիկական համագործակցության զարգացում, համաշխարհային գիտատեխնոլոգիական տարածքում դիրքի ձեռքբերում եւ հաստատում:

Ըստ այդմ մշակվել է մարտավարություն: Անհրաժեշտ է ստեղծել մրցունակ ոլորտ գիտատեխնիկական հետազոտությունների եւ մշակումների համար, ապահովել զարգացման կայուն եւ անհրաժեշտ պայմաններ, հետազոտությունների համար վերահսկել եւ արդյունավետ օգտագործել տրամադրվելիք միջոցները, իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ եւ արդիականացնել կառավարման ձեւերը:

Ռազմավարական ծրագրում առանձին կետով եւ առանձին ֆինանսավորմամբ տեղ է հատկացվել հայագիտության խնդրին: Առաջությունը Գիտապետկոմը տվել է ԳԱԱ-ին, որովհետեւ նրանք երկար տարիներ կոորդինացրել են այդ ոլորտը, ունեն առաջատար մասնագետներ: «Հայագիտությամբ զբաղվող հիմնական կառույցը ԳԱԱ-ն է: Դա չի նշանակում, որ առանձին ինստիտուտներ չեն կարող զբաղվել այդ խնդրով», նկատում է Սամվել Հարությունյանը: Նա նկատում է, որ հայագիտությունը դարձել է ցավոտ խնդիր: Թիվ մեկ խնդիրը ներկայիս հայագետների խորհրդային տարիներին ստացած կրթությունն է: «Նոր շնչի, առողջ մտածելակերպի, ճշմարտությունից չվախեցող մարդկանց կարիք ունենք: Պատմամշակութային ժառանգությունը նորմալ մատուցելու տեսանկյունից, լեզվական, ծագումնաբանության հարցերի առումով հայագիտությունը լուրջ անելիքեր ունի: Խնդիրը լուրջ քաղաքական նշանակություն է ստանում»: Նա նկատում է, որ հայ ժողովրդի պատմության մասնագետներ կան, որոնք ծագումնաբանության վերաբերյալ լուրջ տարաձայնություններ ունեն: Օրինակ՝ հայոց պատմության քառահատորյակի հրատարակությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից, սակայն դեռ չի հրատարակվել, որովհետեւ ծագումնաբանության վերաբերյալ հստակ մոտեցումներ չկան:

Ռազմավարական ծրագրով ենթադրվում է ունենալ անգլիալեզու հայագիտական մի շարք հանդեսներ, որպեսզի հողվածները արտերկրում էլ կարդան:

Եռօրյա գիտաժողով՝ նվիրված գիտության զարգացման հիմնահարցերին

Ջերմուկում ավարտվեց «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով եռօրյա գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը: Գիտաժողովի նպատակն էր գիտական հանրությանը ներկայացնել Գիտության պետական կոմիտեի երկամյա աշխատանքները և դրանցից ակնկալվող արդյունքները:

Միաժամանակ, գիտաժողովը նպատակ էր հետապնդում ներկայացնել հետագա ծրագրերը, գիտության առջև ծառայած հիմնախնդիրները, ինչպես նաև գիտական հանրության և գիտաշխատողների հետ քննարկել առկա մտահոգությունները և համագործակցության ձևերը: Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, գիտատեխնիկական կազմակերպությունների և բուհերի ներկայացուցիչներ:

Գիտաժողովի առաջին օրը ներկայացվեց «Գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգերի մասին» զեկույցը, որի համատեքստում Գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կ. Հայրապետյանն անդրադարձավ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային /թեմատիկ/ և նպատակային-ծրագրային ֆինանսավորմանը, գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորմանը, ինչպես նաև գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգերի նախագծերին: Նա նշեց, որ նախանշված կարգերի ընդունման նպատակը ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերի կատարելագործումն է, որը կնպաստի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ըստ այդմ, կհստակեցվեն ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերը, դրանց հատկացման չափանիշները և մեխանիզմները՝ ապահովելով համապատասխան չափորոշիչներով միջոցների հասցեագրված հատկացումը ու դրանց օգտագործման պատասխանատվության բարձրացումը: Բացի այդ, հնարավորություն կստեղծվի արդյունավետ վերահսկողություն իրականացնել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ: Միաժամանակ, Կ. Հայրապետյանն ընդգծեց, որ ֆինանսավորման նոր կարգերի ընդունումը թույլ կտա ներդնել գիտական ծրագրերի և թեմաների ֆինանսավորման այնպիսի մեխանիզմներ, որով կբացառվի պետության կողմից հատկացվող միջոցների փոշիացումը: Նա շեշտեց, որ, պահպանելով ֆինանսավորման բազմաձևությունը, այն պետք է իրականացվի բացառապես մրցութային կարգով, ծրագրային հիմնավորման սկզբունքով և հասցեագրված: Իր զեկույցում Կ. Հայրապետյանը կարևորեց գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ստեղծումը և ներդրումը, ինչպես նաև միջազգային մակարդակին համապատասխան գիտական փորձաքննության չափանիշների ու չափորոշիչների սահմանումը և կիրառումը: Այդպիսի համակարգի ներդրումը հնարավորություն կտա գիտական ծրագրերի (թեմաների) ընտրությունն իրականացնել բացառապես մրցութային կարգով, ֆինանսավորել և իրագործել այն գիտական ծրագրերը և թեմաները, որոնք միտված են միջազգային մակարդակին համապատասխան արդյունքների ձեռքբերմանը: Ջեկույցից հետո գիտաժողովի մասնակիցներն արտահայտեցին իրենց տեսակետներն ու մտահոգությունները՝ ֆինանսավորման նոր կարգերի նախագծերի վերաբերյալ: Գիտաժողովի երկրորդ օրը մասնակիցներին միացան նաև ՀՀ կրթության և գիտության

նախարարի տեղակալ Մ Մկրտչյանը և Գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը: Մ. Մկրտչյանը, ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, ներկայացրեց գիտության ոլորտի զարգացման, հեռանկարների և առկա վիճակի վերաբերյալ իր մոտեցումները, ինչպես նաև հույս հայտնեց, որ նման գիտաժողովները ապագայում կկրեն պարբերական բնույթ: Գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը նախ անդրադարձավ կոմիտեի երկամյա գործունեությանը՝ նշելով, որ նորաստեղծ կոմիտեն իրականացրել է գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթներից բխող բազմաթիվ միջոցառումներ. անցկացվել է գիտական հիմնարկների անձնագրավորում, ներդրվել է անկախ փորձագիտական համակարգ, մշակվել են ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի նախագծեր, ինչպես նաև ֆինանսավորվել են գիտաժողովներ, կազմակերպվել գիտական և գիտատեխնիկական ծրագրերի մրցույթներ: Նա նշեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել գիտության երիտասարդացմանն ուղղված միջոցառումներին. այդ համատեքստում կազմակերպվել են երիտասարդական դպրոցներ, CRDF-ի հետ համատեղ երիտասարդ գիտնականների համար իրականացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 24 երիտասարդական գիտական ծրագիր, ներդրվել են միջազգային համագործակցության նոր հիմքեր: Գիտաժողովի շրջանակում Ս. Հարությունյանը հանդես եկավ «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության մասին» գեկույցով՝ նշելով, որ ռազմավարությունը մոտ ապագայում կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը, և գիտաժողովի հիմնական նպատակներից մեկը նաև ռազմավարության շուրջ թափանցիկ և շահագրգիռ քննարկումների կազմակերպումն է, որոնց արդյունքում միգուցե ձևավորվեն նոր մոտեցումներ: Բանախոսը շեշտեց, որ ռազմավարությունը, որը ՀՀ գիտության ոլորտի ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջությունն է, ամրագրում է 2011-2020 թվականներին գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը: Ըստ Ս. Հարությունյանի՝ ռազմավարությունը հիմք կհանդիսանա ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 և 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրերի մշակման համար, որոնք կապահովեն գիտության ոլորտի դինամիկ և նպատակաուղղված զարգացումը և կիրականացվեն ՀՀ կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և Սփյուռքի ջանքերի զուգակցմամբ: Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության նպատակը 2010-2020 թվականներին Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի առաջընթաց և դինամիկ զարգացումն ապահովելն է: Իր գեկույցում Ս. Հարությունյանը նախ անդրադարձավ ներկա վիճակին և առկա հիմնախնդիրներին, մասնավորապես, ներկայումս ՀՀ-ում գիտական, գիտակրթական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվում է ավելի քան 100 կազմակերպություն, որոնք ներկայացնում են Գիտությունների ազգային ակադեմիան և 10-ից ավելի գերատեսչություններ: Հանրապետության գիտական և գիտակրթական կազմակերպություններում գիտական գործունեությամբ զբաղվում է շուրջ 17 հազար մարդ: Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական ծրագրերի և թեմաների իրականացման գործում ներգրավված են շուրջ 7.5 հազար գիտնականներ և գիտական աշխատողներ, որոնցից 3075-ը ունի գիտական աստիճան: 2009 թվականի պետական բյուջեում գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի գծով հատկացումները 2001 թվականի համեմատությամբ ավելացել է ավելի քան 3 անգամ: 2008-2009 թվականներին միջազգային դրամաշնորհներով իրականացվել է ավելի քան 50 գիտական ծրագիր, որոնց ֆինանսավորման ընդհանուր ծավալները կազմել են տարեկան շուրջ 7 մլն ԱՄՆ դոլար: Ներդրվել է պետական բյուջեից գիտական ծրագրերի և թեմաների մրցութային և ծրագրային ֆինանսավորման համակարգը: Բացի այդ, ստեղծվել են ավելի քան 30 ոչ պետական գիտական կազմակերպություններ, գիտական հիմնադրամներ և հասարակական կազմակերպություններ, որոնցից 17-ը պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացրել են գիտական ծրագրեր: Գիտության ոլորտի երիտասարդացման քաղաքականության շրջանակում 2008-2009 թվականներին կազմակերպվել է 4 երիտասարդական ամառային դպրոց, որին մասնակցել է ավելի քան 150 երիտասարդ գիտնական և ասպիրանտ: 2008-2009 թվականներին ստեղծվել է

անկախ գիտական փորձաքննության համակարգը, որում ընգրկվել է շուրջ 1200 գիտնական հանրապետությունից և օտարերկրյա պետություններից: Ս. Հարությունյանը նշեց, որ 2008 թվականից առանձնակի ուշադրություն է դարձվել հայագիտությանը: 2008-2009 թվականներին հայագիտական հետազոտական ծրագրերն ավելացել են երեքով, այդ թվում՝ մեկ պետական նպատակային ծրագիր: Գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ գիտության ոլորտում առկա են նաև բազմաթիվ հիմնախնդիրներ, մասնավորապես, խզված է հիմնարար հետազոտություններ-կիրառական հետազոտություններ-ինովացիոն գործունեություն կապը, առկա նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները չեն ապահովում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը, բացակայում է ներհանրապետական գիտատեղեկատվական միասնական համակարգը՝ ներառյալ էլեկտրոնային գրադարանների ցանցը, գիտահրատարակչական գործունեությունը չի բավարարում միջազգային չափանիշներին, ինչպես նաև շարունակվում է բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսքը գիտության ոլորտից: Առկա վիճակը և հիմնախնդիրները ներկայացնելուց հետո Ս. Հարությունյանը մատնանշեց այն հիմնական առաքելությունները, որոնք ամրագրված են ռազմավարությունում, այն է՝ ձևավորել գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգ, արդիականացնել գիտության ոլորտի նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները, ապահովել գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճ, ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ, և իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդավիճակություն, ինչպես նաև ապահովել հայագիտության ոլորտի առաջնային զարգացումը, էապես ընդլայնել գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային համագործակցությունը և այլն: Ամփոփելով զեկույցը՝ Ս. Հարությունյանը նշեց, որ իրականում ռազմավարության իրականացումը հնարավորություն կընձեռի հնարավորինս սահուն ընդգրկվել համաեվրոպական գիտատեխնիկական, գիտակրթական և տնտեսական տարածք, կնպաստի միջազգային շուկայում հայրենական տնտեսության ուրույն տեղի ձեռքբերմանը, մրցակցային դիրքերի ամրապնդմանը և Հայաստանի Հանրապետությունում գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծմանը: Զեկույցից հետո գիտաժողովի մասնակիցները մի շարք հարցեր ուղղեցին բանախոսին և ներկայացրին ռազմավարության իրականացման իրենց տեսլականը:

Գիտաժողովի եզրափակիչ օրն անդրադարձ եղավ «Գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին», որը մշակվել է Գիտության պետական կոմիտեի կողմից: Նշված թեմայի շուրջ զեկույցով հանդես եկավ կոմիտեի նախագահը, որին հաջորդեցին գիտաժողովի մասնակիցների բուռն քննարկումները: Գիտաժողովի ավարտին կազմակերպվեց կլոր սեղան-քննարկում, որի ընթացքում քննարկվեցին գիտական խորհուրդներին, հրապարակային պաշտպանություններին, գիտական ամսագրերին, ինչպես նաև երկաստիճան համակարգին և ԲՈՀ-ի գործունեությանը վերաբերող խնդիրներ:

Մեկնարկեց «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովը

Այսօր Ջերմուկ քաղաքում մեկնարկեց «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովը, որի կազմակերպիչներն են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը: Նշենք, որ Ջերմուկ քաղաքում գիտաժողովը շարունակվելու է մինչև մայիսի 9-ը ներառյալ:

Ինչպես տեղեկացնում է Ջերմուկ քաղաքից Panorama.am-ի թղթակիցը, գիտաժողովին մասնակցում են Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը, ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կարեն Հայրապետյանը, իսկ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը և ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը գիտաժողովի աշխատանքներին կմիանան վաղը:

Գիտաժողովին հրավիրված են մասնակցելու նաև ոլորտին առնչվող կառավարական մարմինների, գիտությունների ազգային ակադեմիայի, գիտատեխնիկական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գիտաժողովի նպատակն է անդրադառնալ գիտության ոլորտի զարգացման հիմնախնդիրներին, ներկայացնել առկա խնդիրներ, ինչպես նաև նախանշել դրանց լուծումները:

Կարեն Կարապետյանը նշեց, որ գիտաժողովի նպատակն է նաև գիտական հանրությանը ներկայացնել կոմիտեի կողմից կատարված աշխատանքները, միջազգային ասպարեզում ունեցած ձեռքբերումները, դրանցից ակնկալվող արդյունքները:

«Միաժամանակ այսօր մենք ուզում ենք ներկայացնել մեր ապագա ծրագրերը, մեր առջև ծառայած խնդիրները, ինչպես նաև գիտական հանրության և գիտաշխատողների հետ կիսել մեր մտահոգությունները: Գիտության զարգացումը և տեխնոլոգիական առաջընթացը համարելով Հայաստանի համար կարևորագույն ռազմավարական խնդիր, ինչպես նաև ելնելով գիտության ոլորտում վարվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից՝ կոմիտեն որդեգրել է գիտական հանրության հետ սերտ համագործակցելու քաղաքականությունը, որը ենթադրում է «հետադարձ կապ» մեխանիզմի ակտիվ աշխատանք: Ի վերջո, բոլորիս նպատակը միջազգային գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում երկրի համար մրցակցային տեղի նվաճումն է, և մեր գործողությունները պետք է բխեն միմիայն Հայաստանի Հանրապետության շահերից», - նշեց Կարեն Հայրապետյանը:

Գիտության պետական կոմիտեի ներկայացուցիչները հանդես կգան գիտության զարգացման ռազմավարության, ոլորտի ֆինանսավորման նոր կարգերի, գիտական աստիճանաշնորհման համակարգի հայեցակարգային դրույթների մասին զեկուցումներով: Նիստերում անդրադարձ կլինի նաև Գիտության պետական կոմիտեի երկամյա գործունեությանը՝ օրենսդրական դաշտի կատարելագործման, ոլորտի բարեփոխումների, գիտական և գիտատեխնիկական համագործակցության ուղղությամբ:

Կարեն Հայրապետյան. «Պետք է բացառել պետության կողմից հատկացվող միջոցների փոշիացումը»

Այսօր, ինչպես տեղեկացրել ենք, Ջերմուկ քաղաքում մեկնարկել է «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովը, որի կազմակերպիչներն են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը: Գիտաժողովը, որի նպատակն է անդրադառնալ գիտության ոլորտի զարգացման հիմնախնդիրներին, շարունակվելու է մինչև մայիսի 9-ը ներառյալ:

Panorama.am-ի թղթակիցը Ջերմուկից հաղորդում է, որ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կարեն Հայրապետյանն այսօր հանդես է եկել գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգերի մասին զեկույցով: Նա ներկայացրել է հիմնականում բազային ֆինանսավորման, պայմանագրային ֆինանսավորման և պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգերը:

Նա շեշտել է, որ գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման կարևորագույն պայմանն է գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ստեղծումը և ներդրումը, ինչպես նաև գիտական ծրագրերի «թեմաների», հայտերի և իրականացվող ծրագրերի հաշվետվությունների գնահատման միջազգային չափանիշներին համապատասխան փորձաքննության կարգի կիրառումը:

Ըստ Կարեն Հայրապետյանի, գիտական ծրագրերի հայտերի, հաշվետվությունների ներկայումս գործող փորձաքննության կարգի պայմաններում գիտության ոլորտի ֆինանսական հատկացումները փոշիացվում են, ամբողջությամբ չեն ծառայում գիտության զարգացման խնդրին անգամ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման բազմաձևության առկայության պայմաններում:

Մասնավորապես, պայմանագրային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական աշխատանքները հաճախ կրկնում են բազային ֆինանսավորմամբ նախատեսված հետազոտությունները, իսկ նպատակային ծրագրերը նպատակաուղղված չեն հասցեագրված գիտահետազոտական արդյունքների ձեռքբերմանը:

Կարեն Հայրապետյանը վստահ է, որ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) և նպատակային ծրագրային ֆինանսավորման նոր կարգերի ընդունումը թույլ կտա ներդնել ֆինանսավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն պետության կողմից հատկացվող միջոցների փոշիացումը:

Պահպանելով բազմաձևությունը՝ ֆինանսավորումը, նրա խոսքերով, պետք է իրականացվի բացառապես մրցութային կարգով՝ ծրագրային հիմնավորման սկզբունքով և հասցեագրված՝ գիտակազմակերպչական և հիմնարար, կարևորագույն կիրառական, հետազոտական ծրագրեր իրականացնող գիտական կազմակերպությունների և գիտակրթական ենթակառուցվածքների պահպանման և զարգացման նպատակով:

Պայմանագրային ֆինանսավորումը պետք է վերածվի իրավական դրամաշնորհային համակարգի: Այն կոչված է ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում ապահովելու առանձին հետաքրքրություններ կայացնող արդիական ինդիքների լուծումը, որոնք կարող են հանգեցնել նոր գիտական հետազոտությունների կամ գիտատեխնիկական մշակումների:

Պետական նպատակային ծրագրային ֆինանսավորումը պետք է իրականացվի համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտական և գիտատեխնիկական հիմնավորմամբ հետազոտական ծրագրերի ձևով: Այսպիսի համակարգի ներդրումը հնարավորություն կտա գիտական ծրագրերի ընտրությունն իրականացնել բացառապես մրցութային կարգով, ֆինանսավորել, իրագործել այն ծրագրերը, որոնք միտված են միջազգային մակարդային համապատասխան արդյունքների ձեռքբերմանը:

Նման համակարգի ներդրմանն են միտված գիտական փորձաքննությունն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման, ծրագրերի, թեմաների և հայտերի երաշխավորման, հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքների կազմակերպման կարգերը:

Կարեն Հայրապետյանն ավելացրեց նաև, որ մեր նպատակն է առաջիկա 5-6 տարվա ընթացքում բազային ֆինանսավորումը հասցնել 50 տոկոսի, նպատակայինը՝ 30 տոկոսի, իսկ մնացած մասը նախատեսել պայմանագրային և թեմատիկ ֆինանսավորման համար:

Նշենք, որ նշված կարգերը հաստատման նպատակով շուտով կներկայացվեն ՀՀ կառավարությանը:

Սամվել Հարությունյան. «Հասարակական գիտակցության մեջ նվազել է գիտության հեղինակությունը»

Ջերմուկում ընթացող «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովում այսօր գիտության զարգացման ռազմավարության մասին զեկուցումով հանդես եկավ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Մինչ այդ ողջույնի խոսքով ներկաներին դիմեց ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Մանուկ Մկրտչյանը:

Կարևորելով այս գիտաժողովը՝ Մ. Մկրտչյանը շեշտեց, որ անդրադարձը գիտության ոլորտի զարգացման հիմնախնդիրներին շատ արդիական է, և այդ խնդիրներն իսկապես լուծման կարիք ունեն, իսկ գիտաժողովի նպատակն է մատնանշել նաև գիտության ոլորտում առկա խնդիրների լուծումները:

«Այս գիտաժողովի ընթացքում մենք ցանկանում ենք գիտական հանրության հետ քննարկել գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը, լսել գիտնականների առաջարկները, ինչու է, նաև դիտողությունները»,- ընդգծեց Սամվել Հարությունյանը՝ ավելացնելով, որ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը նախատեսվում է առաջիկայում ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

Սամվել Հարությունյանը, ներկայացնելով գիտության զարգացման ռազմավարության մասին զեկույցը, նշեց նաև, որ այն Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի ներկա վիճակի առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջությունն է: Ռազմավարությունը հիմք է գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թթ. ռազմավարական ծրագրերի մշակման համար: Իսկ այդ ծրագրերն ապահովելու են ՀՀ գիտության ոլորտի դինամիկ և նպատակաուղղված զարգացումը և իրականացվելու են կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և Սփյուռքի ջանքերի զուգակցմամբ:

Ըստ Սամվել Հարությունյանի, չնայած գիտության ոլորտում ունենք բազմաթիվ ձեռքբերումներ, սակայն կան նաև լուրջ հարցեր, որոնց արմատական բարեփոխումների ձգձգումը հանգեցրել է բազմաթիվ խնդիրների: Մասնավորապես, գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի պետական քաղաքականության մշակումը և աշխատանքների կազմակերպումը բավարար չափով չեն իրականացվում հաշվի առնելով ոլորտի կայուն զարգացում ապահովող համակարգի պահանջները: Խզվել է հիմնարար հետազոտություններ-կիրառական հետազոտություններ-ինտոլացիոն գործունեություն կապը: Առկա նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները չեն ապահովում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը: Բացակայում է ներհանրապետական գիտատեղեկատվական միասնական համակարգը, ներառյալ՝ էլեկտրոնային գրադարանների ցանցը: Ծարունակվում է նաև բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսը գիտության ոլորտից: Բացակայում է երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման պետական նպատակային քաղաքականությունը, ինչպես նաև շարունակվում է ոլորտի ծերացումը: Հասարակական գիտակցության մեջ նվազել է գիտության հեղինակությունը և գիտաշխատողի մասնագիտական կարիերայի գրավչությունը:

Ներկայացնելով գիտության ոլորտում առկա մի շարք այլ խնդիրներ՝ Սամվել Հարությունյանը նշեց, որ դրանք լուծելու, ինչպես նաև ունեցած ձեռքբերումները պահպանելու և զարգացնելու համար սահմանվել է գիտության ոլորտի զարգացման տեսլականը, ձևակերպվել են իրականացվելիք առաքելությունները, ընտրվել են

հեռանկարային թիրախները, ինչպես նաև դրանց հասնելու մարտավարությունը:

Առաջին հերթին անհրաժեշտ է ձևավորել գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգ, ինչպես նաև արդիականացնել գիտության ոլորտի նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները: Պետք է ապահովել նաև երիտասարդ կադրերի ներհոսքը գիտության ոլորտ, իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխություն: Հարկ է խթանել գիտական կազմակերպություններում տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձևավորմանն ուղղված հետազոտությունների իրականացումը, սորամուծությունների և արտոնագրերի ավելացումը, էապես ընդլայնել գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային համագործակցությունը:

Աղբյուր՝ Panorama.am

Ինչու՞ չմիզել քամուն հակառակ

2007թ., երբ Ռոբերտ Քոչարյանը Սամվել Հարությունյանին նշանակեց նորաստեղծ Գիտության պետական կոմիտեի ղեկավար, նրան անկեղծորեն ասաց. «Քեզ կարցեր եմ ուղարկում»: 2010թ. մայիսի 6-9-ը ԳՊԿ-ի և Երևանի ճարտարապետաշինարարական պետական համալսարանի նախաձեռնությամբ Ջերմուկում գիտաժողով էր կազմակերպվել գիտության տարբեր ոլորտների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ «կարցերում» կատարված աշխատանքներն ամփոփելու և առկա խնդիրները քննարկելու նպատակով:

ԱՎԼԵՍ, ԹԱՓԵՍ ՓՈՇԻՆ



Եթե որևէ բարձրաստիճան պաշտոնյա տարվա մեջ մեկ անգամ հայտնվում է Գիտությունների ազգային ակադեմիայում, պարզում է, որ ակադեմիկոսներին հուզող թիվ մեկ թեման փողն է: Ի պատասխան ակադեմիկոսների պահանջների՝ շատ հաճախ լսվում է, որ գիտության ոլորտին հատկացվող միջոցները հիմնականում փոշիացվում են: Գումարների փոշիացման «ամենագիտական» պատասխանը վերջերս տվեց ԳԱԱ նախագահ Ռադիկ

Մարտիրոսյանը. «Ի՞նչ փոշիացնել, փոշի կա՞, որ մի հատ էլ փոշիացնենք, մենք փոշի չունենք, փոշին Իսլանդիայում է»:

ԳՊԿ-ն, սակայն, որոշել է միջոցներ ձեռք առնել եղած գումարների նպատակային ծախսման համար: Ֆինանսավորումը դառնալու է ծրագրային՝ լինի նպատակային, թե բազային ֆինանսավորման եղանակով: Իսկ ամենակարևորը՝ այն պետք է դառնա մրցութային: Այսինքն, ինչպես բացատրում էր Սամվել Հարությունյանը, ցանկացած ծրագիր նախ անցնելու է մրցութով և հաղթելու դեպքում միայն կարող է ֆինանսավորվել: «Ցանկացած ինստիտուտի տնօրեն պետք է հասկանա. եթե լավ ծրագիր չներկայացրեց, չի ֆինանսավորվի»: Ներկայացված ծրագրերը քննելու է գիտական ծրագրերի և թեմատիկ փաթեթի երաշխավորման և հաշվետվությունների հաստատման հանձնաժողովը:

Գումարների փոշիացման դեմ մեկ այլ միջոցառում է գիտնականների և տարբեր ծրագրերի մեջ նրանց ներգրավվածության համակարգումը: ԳՊԿ-ն հատուկ ցուցակ է պատրաստում, որի մեջ պարզորոշ կերևա, թե որ գիտնականը որ ծրագրերից է գումար ստանում: ԳՊԿ-ի ուսումնասիրություններով՝ պայմանագրային թեմատիկ ծրագրերի (դրամաշնորհներով իրականացվող ծրագրեր) 80 տոկոսը ֆինանսավորվում է նաև բազային եղանակով, այսինքն՝ ընդգրկված են ինստիտուտների ծրագրերում: Հենց այս եղանակով են առավել ճարպիկ գիտնականներն իրենց ձեռքում կենտրոնացնում եղած գումարները, մինչդեռ իրական գիտնականներից շատերը, որ պակաս «բաշարող» են, այդպես էլ մնում են չքավորության մեջ:

ԳՊԿ-ն հատուկ տեղ է տալու նաև երիտասարդ գիտնականներին: Նախագահի հանձնարարությամբ երիտասարդ գիտնականները ընտանիքները հատուկ հիպոթեքային վարկերով բնակարաններ ձեռք կրերեն: ԳՊԿ-ն հատկացնում է նաև երիտասարդական դրամաշնորհներ, կազմակերպում երիտասարդական դպրոցներ:

ԷՍ ԻՆՉՔԱ-Ն ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ ԿԱՆ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՁ

Հայաստանում մեկ այլ լուրջ գիտական հետազոտության թեմա է գիտնականների բազմացման հայկական ֆենոմենը: Ուրիշ ոչ մի երկրում գիտնականներն այնպես և այնքան չեն բազմանում, ինչպես և որքան Հայաստանում: Բարձրագույն որակավորման հանձնաժողովի փոխնախագահ Լիլիթ Արզումանյանը վրդովվել էր. «Էսօր ով նստում և նախարար, մարզպետ, որոշում ա գիտնական դառնա»: Գիտնականների բազմացմանը նպաստող կարևոր օղակն, իհարկե, հենց այն կառույցն է, որը փոխդեկավարում է տիկինը, բայց նման մտադրություն ունեցողներին, ձայնը բարձրացնելով, հրամայեց. «Ինձ հարցեր չտաք, հարցերը տվեք ավելի վերև»:


Ֆիզիկոս և համատեղությամբ ԳՊԿ ղեկավար Մամվել Հարությունյանի հաշվարկներով՝ այս տեմպերով բազմացման շարունակման դեպքում 2018թ. կունենանք 100 թեկնածու: «Եթե տարեկան հարյուրավոր ակտուալ թեմաներ ենք ունենում, որոնք պաշտպանում են, պետք է Իսրայելից առաջ անցած լինեինք»: Պարզություն մտցնելու համար հիշեցնենք, որ Հայաստանը գիտության զարգացման մակարդակով փառահեղորեն բազմում է աֆրիկյան և ասիական հետամնաց երկրների մեջտեղում:

Կրթության և գիտության փոխնախարար Մանուկ Մկրտչյանը հետաքրքրասիրությունից դրդված թերթել էր ԳԱԱ տարեկան հաշվետվությունը և Փիլիսոփայության ինստիտուտի բաժնում տեսել, որ գոնե նմուշի համար «ակտուալ, էսօրվա լուրջ թեմա չկար, միայն երկու հատ պատմությանը վերաբերող թեմա էր»: Եվ դա՝ այնտեղ, որտեղ, ըստ Մանուկ Աշոտիչի, «կարելի է աղքատ լինելով աշխարհին հետաքրքիր դառնալ»:

ՈՒԺԵՂ, ԹԵ՞ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԲՈՆ

ԵՃՇՊՀ ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը հարց բարձրացրեց՝ «ի՞նչ ԲՈՆ է մեզ հարկավոր, ուժե՞ղ, թե՞ թույլ»: Գիտաժողովի մասնակից պրոռեկտոր, փոխնախարար, փոխտնօրեն և այլ պաշտոններ զբաղեցնող, միաժամանակ գիտնական համարվող անձանցից ոչ մեկը չկողմնորոշվեց ինչ պատասխան տալ: Պատասխանը երևի թե ԲՈՆ փոխնախագահ Լիլիթ Արզումանյանի խոսքում էր. «Գիտական աստիճանակարգման ոլորտում միակ խնդիրը բարոյականությունն է: Մի տխմար գալիս, կանգնում է ամբիոնի մոտ, 20 հոգի հավաքվում են քննելու, որոնցից 18-ը գիտեն, թե ով է գրել դիսերտացիան, նախապես պայմանավորված 2 հարց են տալիս, լսում անգիր արած պատասխանը, որից հետո աշխատանքը բերում են ԲՈՆ, տեսնում ենք՝ ինտերնետից արտագրված է: Ի՞նչ է, ուզում եք էդ 10 տոկոսն էլ հետ չուղարկե՞նք»: ԲՈՆ փոխնախագահի ներկայացրածը Հայաստանի գիտնականների բազմացման ֆենոմենի պարզ բացատրությունն էր, և ինչպես երևաց, խոչընդոտի հանդիպում է բազմացողների ընդամենը 10տոկոսը (չի բացառվում, որ հաջորդ տարի՝ ավելի բազմակողմանի նախապատրաստական աշխատանքներից հետո, աշխատանքն արժանանա ԲՈՆ հավանությանը), մնացած 90 տոկոսը բարեհաջող գիտական աստիճանով է օժվում:

Գիտական աստիճաններից (գիտությունների թեկնածու, դոկտոր) բացի, տեմպերն ակտիվ են նաև գիտական կոչումների շնորհման ասպարեզում: Մի ժամանակ, ասաց Արզումանյանը, որոշվեց կոչումները ԲՈՆ-ից վերցնել, տալ բուհերին, բայց դրա հետևանքը եղավ այն, որ մեկ էլ «Ձուվետում միանգամից մի 60 պրոֆեսոր հայտնվեց, գյուղաքաղաքում ստեղծված ինստիտուտում 10 հոգու պրոֆեսոր էին դարձնում, որոնք իրենց անունը երկու լեզվով գրել չգիտեին»:





Մեր գիտնականները, ի տարբերություն զարգացած երկրների գիտնականների, շարունակում են բարձրախոսի մոտ դիրքավորված խոսել անգամ այն բանից հետո, երբ թե՛ իրենք, թե՛ շրջապատը հասկանում է, որ բարձրախոսը չի աշխատում:

ՔԱՄՈՒՆ ՀԱԿԱՌԱԿ ՉՄԻՋԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԵՎ ԴՈՒՆ Է ՊԵՏՔ

Մամվել Հարությունյանին բավական դուր էր եկել Ամստերդամի կենտրոնում գտնվող մի հռչակավոր շենքի ճակատին գրված տողերը. **«Homo sapiens non urinat in ventum»**՝ «Բանական մարդը քամուն հակառակ չի միզում»: Սա Հարությունյանը, երևի թե, մեկնաբանում է այն առումով, թե գիտության զարգացումն այլընտրանք չունի, չի կարելի դրան հակառակ գնալ: Իրականում սա այնքան տարողունակ միտք է, որ կարելի է տարբեր կերպ մեկնաբանել: Օրինակ, կարելի է մտածել այսպես. զարգացած երկրներում գիտնականները հասել են չգիտես ինչ բարձունքների, իսկ

մեզ մոտ գիտական աստիճաններն ու կոչումները դարձել են հասարակ առուծախի առարկա. արդյո՞ք սա քամուն հակառակ միզել չէ: Մեր գիտնականները, երբ հանկարծ ու հրաշքով մի բան են հայտնագործում, այդ հրաշքն ավարտվում է նրանով, որ պարզվում է՝ դրա ավելի կատարելագործված տարբերակը զարգացած երկրներից մեկում վաղուց հայտնագործված է: Բայց այստեղ մեկ այլ դիտարկում էլ կարելի է անել: Ի՞նչ կապ ունի քամուն հարմարվող բանական մարդը գիտնականի հետ: Համաշխարհային պատմության մեջ բոլոր կարևորագույն հայտնագործություններն արվել են միայն այն բանի շնորհիվ, որ բոլորի կողմից հալածված ու չընդունված գիտնականը, որի ուղեղը բանականության սահմաններում չէր տեղավորվում, քամուն հակառակ է գնացել: Հնարավոր է՝ դա այդ գիտնականներին կեղտոտվելուց, վնասվելուց, տուժելուց բացի այլ բան չի տվել, բայց հենց դրա շնորհիվ է, որ այդ մարդիկ մնացել են պատմության մեջ, ստեղծել են արժեք, քանի որ գործել են ոչ այնպես, ինչպես ընդունված է եղել «բանական մարդկանց» միջավայրում:

Կրթության և գիտության փոխնախարար Մանուկ Մկրտչյանը հավաքված գիտնականներին ասում էր, որ այն, ինչ կատարվում է աշխարհում գիտության կազմակերպման ոլորտում, արդեն հնացած է, որ մենք պետք է ուսումնասիրենք Եվրոպայի, Ամերիկայի փորձը, որ նույն սխալները չանենք, մեզ հարկավոր է նոր բան գտնել: «21-րդ դարը տնտեսագիտության դար է: Էստեղ ո՛չ շանս է պետք, ո՛չ փող է պետք, էստեղ դուխ է պետք, առաջին հերթին էդ ոգին է պետք: Գտնե՛նք մի պատասխան, որ աշխարհը չի կարող գտնել»: Այսպես են երևի թե մտածել նաև քամուն հակառակ գնացածներից շատերը, բայց երբ Մանուկ Աշոտիչն իր այս մտքերը շարադրում էր հայ գիտնականներին, նրանցից շատերն իրար երեսի էին նայում ու ասում. «Էս ինչե՞ր ա խոսում!», ինչից կարելի էր եզրակացնել, որ նրանց մեջ դժվար թե գտնվեն մարդիկ, որ դուխ ունենան կյանքում գոնե մեկ անգամ քամուն հակառակ միզելու:

Լուսինե ԿԵՍՈՅԱՆ

В Армении разработан новый порядок финансирования науки

май 08 2010, 03:40

Действующий порядок предоставления научных заявок и экспертизы отчетов распыляет средства, выделяемые на финансирование науки, поэтому Государственный комитет по науке Армении разработал новый порядок финансирования, сообщил руководитель аппарата сотрудников ведомства Карен Айрапетян.

"Сегодняшний порядок финансирования распыляет средства, выделенные на развитие науки, в частности, научные работы, которые финансируются на договорной основе, очень часто дублируют исследования, которые находятся на базовом финансировании и пр.", - отметил Айрапетян.

По словам руководителя аппарата сотрудников Госкомитета по науке, порядок нового финансирования в ближайшее время будет представлен на утверждение в правительство Армении. В соответствии с ним, отбор научных проектов будет проходить только на конкурсной основе, и финансирование получают лишь те программы, которые направлены на достижение конкретных научно-исследовательских результатов.

Карен Айрапетян сообщил, что согласно новой системе, договорное финансирование должно перерасти в систему грантов, которая предполагает финансирование приоритетных направлений развития науки и техники в Армении. А выделение денег государством должно идти в рамках стратегических программ.

Ранее президент Национальной академии наук Армении Радик Мартиросян заявил журналистам, что [финансирование науки в Армении является недостаточным](#) и составляет всего 0,2 процента от ВВП. Тогда как в соседних Грузии и Азербайджане этот показатель равен 0,5 процента, в России - 1.1 % от ВВП, а в странах Евросоюза - 2 %.

По словам Мартиросяна, стратегия развития науки Армении предполагает, что в 2020 году финансирование науки составит 2 % от ВВП. Насколько реалистичен данный прогноз, покажет время. В частности, если финансирование науки возрастет до 2 % от ВВП, то оно увеличится в 10 раз по сравнению с нынешним объемом.

Президент академии выразил свое недоумение тем, что в странах ЕС финансирование одного исследователя составляет 120-130 тысяч евро в год, а в Армении - всего порядка 3 тысячи евро.

"На долю академии приходится 4 млрд. драмов из выделенных восьми миллиардов, и эти средства идут на текущие расходы 30 академических научно-исследовательских институтов, которые занимаются в основном фундаментальной, а не прикладной наукой", - заявил Мартиросян.

Отметим, что, согласно данным Государственного комитета по науке Армении, сегодня из бюджета финансируется около 130 научных организаций, в число которых входят институты системы Академии наук, отраслевые институты, вузы, исследовательские центры и т.д.

Между тем, в вопросе кадров армянская наука понесла значительные потери. Если в советское время в сфере науки работало более 25 тыс. человек, то сейчас эта цифра снизилась до 7,5 тыс. В основном из науки ушли люди среднего возраста, и она сильно постарела. Сегодня средний возраст кандидатов наук составляет 52 года, докторов - 62 года, а в отдельных отраслях - и того выше.

В подавляющем большинстве в научных организациях в очень плохом состоянии находится материально-техническая база. Установки и оборудование 25-30-летней давности не позволяют проводить качественные эксперименты. Если в советское время на науку в Армении тратилось от 500 до 600 млн. долларов ежегодно, то в 2008 году финансы, выделенные из государственного бюджета на науку, составили около 6,8 млрд. драмов.

(**прим.корреспондента "Кавказского узла"**: 1 доллар США равен 387 армянским драмам), в 2009 году - 8,3 млрд. драмов.

При этом, около 40% годового научного бюджета расходуется на 30 научно-исследовательских институтов и центров, входящих в систему НАН, 15% - на вузы, занимающиеся исследовательскими работами, остальные 45% - на отраслевые институты.

Согласно данным Госкомитета по науке, состояние науки в Армении тяжелое, но не безнадежное: в стране сохраняется реальный научный потенциал, так как в год публикуется около 4000 научных статей, из которых 1000-1200 - в серьезных зарубежных изданиях.

Кроме того, в стране ежегодно реализуются международные грантовые программы на сумму около 7 млн. долларов. Планируется разработать приоритетные направления развития науки. Скоро в правительство будут представлены предложения по созданию научных и научно-производственных центров, их критериям и порядку создания.

Несмотря на планы по увеличению финансирования науки в Армении в будущем, пока этот показатель не демонстрирует роста. Как сообщил ["Кавказский узел"](#), по утвержденном [правительством Армении бюджету на 2010 год](#), доходы государства должны увеличиться за 2010 году на 65 миллиардов драмов и составить 742 миллиарда драмов. В то же время, в бюджете [предусматривалось сокращение](#) государственного финансирования, многих сфер и, в частности, науки.

Автор: *Лилит Ованисян*; **источник:** *корреспондент "Кавказского узла"*

Գիտության զարգացման հիմնահարցերը՝ գիտաժողովի օրակարգում

Ջերմուկում ավարտվել է «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով եռօրյա գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն եւ Երեւանի Ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանը: Գիտաժողովի նպատակն էր գիտական հանրությանը ներկայացնել Գիտության պետական կոմիտեի երկամյա աշխատանքները եւ դրանցից ակնկալվող արդյունքները:

Գիտական հանրության հետ քննարկելով երկրում առկա գիտության զարգացման հիմնահարցերը, լսելով գիտնականների առաջարկներն ու դիտողությունները՝ Գիտության պետական կոմիտեն ամփոփեց գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը, որն առաջիկայում նախատեսվում է ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

Գիտական ռազմավարությունը ՀՀ գիտության ոլորտում այժմ առկա հիմնախնդիրների ու զարգացման հեռանկարների ամբողջությունն է: Այն հիմք է հանդիսանում գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թթ. ռազմավարական ծրագրերի մշակման համար: Ռազմավարության ծրագրում առանձին տեղ է զբաղեցնում հայագիտությունը: Գիտաժողովի ընթացքում քննարկվեց նաեւ ֆինանսավորման նոր հայեցակարգ, գիտական փորձաքննություն նոր համակարգը, գիտական հիմնարկների անձնագրավորման հարցը եւ գիտության ոլորտի այլ արդիական խնդիրներ:

Գիտության պետական կոմիտեն երիտասարդ գիտնականների համար իրականացրել է մրցույթ, որի արդյունքում ֆինանսավորվել է 24 երիտասարդական գիտական ծրագիր՝ հիմք դնելով միջազգային համագործակցության նոր կապերի:

Նարինե Ղալեյան

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԵՐԱՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հասարակության գիտակցության մեջ նվազել է գիտաշխատողի կարիերայի գրավչությունը

Մայիսի 6-9-ը Ձերմուկ քաղաքում կայացավ «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ԿԳ նախարարության Գիտության պետական կոմիտեն: Քննարկվեցին գիտության ոլորտի զարգացման հիմնախնդիրներն ու հեռանկարները, անդրադարձ եղավ գիտության զարգացման ռազմավարության, ոլորտի ֆինանսավորման նոր կարգերի, գիտական աստիճանաշնորհման համակարգի հայեցակարգային դրույթներին, գիտության պետական կոմիտեի երկամյա գործունեությանը՝ օրենսդրական դաշտի կատարելագործման, ոլորտի բարեփոխումների գիտական եւ գիտատեխնիկական համագործակցության ուղղությամբ:

Նշենք, որ 2008-2009թթ. կոմիտեի կողմից իրականացվել են գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթներից բխող միջոցառումներ:

Եռօրյա գիտաժողովի ընթացքում Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն անդրադարձավ գիտության զարգացման ռազմավարությանը, ասաց, որ պետք է գիտական հանրության հետ քննարկել ոլորտի զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև լսել գիտնականների առաջարկներն ու դիտողությունները: Ս.

Հարությունյանը հավելեց, որ ոլորտի զարգացման ռազմավարությունը առաջիկայում ներկայացվելու է ՀՀ կառավարության հաստատմանը: Գիտության զարգացման ռազմավարության մասին զեկույցը ներկայացնելով՝ նա ասաց, որ այն ՀՀ գիտության ոլորտի ներկա վիճակի առկա հիմնախնդիրների հեռանկարային զարգացման նպատակների եւ ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջությունն է.

«Ռազմավարությունը հիմք է գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թթ. ռազմավարական ծրագրերի մշակման համար, որոնք ապահովելու են գիտության ոլորտի նպատակաուղղված զարգացումը եւ իրականացվելու են ՀՀ կառավարության, Սփյուռքի ջանքերի եւ քաղաքացիական հասարակության ինստիտուտների զուգակցմամբ: Չնայած գիտության ոլորտում ունենք բազմաթիվ ձեռքբերումներ, կան նաև լուրջ հարցեր, որոնց բարեփոխումների ձգձգումը հանգեցրել է բազմաթիվ խնդիրների: Մասնավորապես՝ գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ոլորտի պետական քաղաքականության մշակումն ու աշխատանքների կազմակերպումը բավարար չափով չեն իրականացվում՝ հաշվի առնելով ոլորտի կայուն զարգացում ապահովող պահանջները: Ինչպես նաև խզվել է հիմնարար հետազոտություններ-կիրառական հետազոտություններ-ինովացիոն գործունեություն կապը, առկա նյութատեխնիկական բազան եւ ենթակառուցվածքները չեն ապահովում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը»: Ս. Հարությունյանը նաև շեշտեց, որ բացակայում է ներհանրապետական գիտատեղեկատվական միասնական համակարգը, ներառյալ՝ էլեկտրոնային գրադարանների ցանցը: Եվ հավելեց, որ գիտության ոլորտից շարունակվում է բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսքը, շարունակվում է ոլորտի ծերացումը: Կոմիտեի նախագահը կարծում է, որ հասարակության գիտակցության մեջ նվազել է գիտության հեղինակությունը եւ գիտաշխատողի մասնագիտական կարիերայի գրավչությունը: Կոմիտեի նախագահը կարծում է, որ անհրաժեշտ է ապահովել երիտասարդ կադրերի ներհոսքը գիտության

ուրտ, իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխություն, ինչպես նաև խթանել գիտական կազմակերպություններում տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռավորմանն ուղղված հետազոտությունների իրականացումը, գիտության եւ տեխնոլոգիաների բնագավառում ընդլայնել միջազգային համագործակցությունը: Ինչ վերաբերում է ֆինանսավորմանը, ապա, ըստ Ս. Հարությունյանի՝ գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման կարևորագույն պայմանն է գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ստեղծումը, եւ գիտական ծրագրերի թեմաների, հայտերի եւ իրականացվող ծրագրերի հաշվետվությունների՝ գնահատման միջազգային չափանիշներին համապատասխան փորձաքննության կարգի կիրառումը: Այս առնչությամբ Գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կարեն Հայրապետյանն էլ ասաց, որ գիտական ծրագրերի հայտերի, հաշվետվությունների ներկայումս գործող փորձաքննության կարգի պայմաններում գիտության ոլորտի ֆինանսական հատկացումները փոշիացվում են եւ ամբողջությամբ չեն ծառայում գիտության զարգացման խնդրին՝ «անգամ ՀՀ պետական բյուջեից գիտական եւ գիտատեխնիկական ֆինանսավորման բազմաձեւության առկայության պայմաններում»: Նա վստահ է, որ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային եւ նպատակային ծրագրային ֆինանսավորման նոր կարգերի ընդունումը թույլ կտա ներդնել ֆինանսավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն պետության կողմից հատկացվող միջոցների փոշիացումը. «Ֆինանսավորումը պետք է իրականացվի բացառապես մրցութային կարգով, ծրագրային հիմնավորման սկզբունքով»: Կ. Հայրապետյանը, ներկայացնելով կոմիտեի ապագա ծրագրերը, հավելեց. «Գիտության զարգացումը եւ տեխնոլոգիական առաջընթացը Հայաստանի համար համարելով կարևորագույն ռազմավարական խնդիր ու ելնելով գիտության ոլորտում վարվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից՝ կոմիտեն որդեգրել է գիտական հանրության հետ սերտ համագործակցելու քաղաքականությունը, որը ենթադրում է «հետադարձ կապ» մեխանիզմի ակտիվ աշխատանք»:

ԵՎԱ ՀԱԿՈՒՅԱՆ

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Մայիսի 7-ից 9-ը Ձերմուկում տեղի ունեցավ «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգերը, գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը, ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգային դրույթները: Անդրադարձ եղավ գիտության պետական կոմիտեի երկամյա գործունեությանը՝ օրենսդրական դաշտի կատարելագործման, ոլորտի բարեփոխումների, գիտական և գիտատեխնիկական համագործակցության ուղղությամբ:

Գիտության պետական կոմիտեի նախագահ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, անդրադառնալով գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը, ներկայացրեց այդ ոլորտի ներկա վիճակը և առկա հիմնախնդիրները: **2009** թվականին պետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի գծով հասկացումները կազմել են **8374626,9** հազար դրամ, որը **2001** թ. համեմատ ավելացել է ավելի քան երեք անգամ: Գիտության պետական կոմիտեի ստեղծումից հետո հայագիտության ոլորտում գիտնականների աշխատավարձը բարձրացել է ավելի քան **75** տոկոսով: Այս ուշադրությունը պայմանավորված է նրանով, որ հայագիտությունը պետության կողմից հայտարարված է գերակա ոլորտ: **2008-2009** թթ. միջազգային դրամաշնորհներով իրականացվել է տարեկան **20** հազար ԱՄՆ դոլարը գերազանցող ավելի քան **50** գիտական ծրագիր, որոնց ֆինանսավորման ընդհանուր ծավալները կազմել են տարեկան շուրջ **7** միլիոն ԱՄՆ դոլար:

Հանրապետությունում գիտական և գիտակրթական կազմակերպություններում գիտական գործունեությամբ զբաղվում է մոտ **17** հազար մարդ: Պետությունից ֆինանսավորվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված է շուրջ **7,5** հազար գիտնական և գիտաշխատող, որոնցից **3075**-ն ունի գիտական աստիճան: **2008** թ. պաշտպանվել են **520** թեկնածուական և **46** դոկտորական ատենախոսություններ՝ գիտության **20** մասնագիտությունների գծով: **2008-2009** թթ. ստեղծվել է անկախ գիտական փորձաքննության համակարգը, որում ընդգրկվել է **1200** գիտնական Հայաստանից և օտարերկրյա պետություններից:

Այս տարիների ընթացքում ընդլայնվել է միջազգային համագործակցությունը: **2008-2009** թթ. գիտության պետական կոմիտեն ստորագրել է գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, Բելառուսի գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ: Օրերս Մոսկվայում ստորագրվել է նաև ՌԴ ֆունդամենտալ հետազոտությունների հիմնադրամի հետ պայմանագիր: Առաջիկայում նախատեսված է Ֆունդամենտալ հետազոտությունների հիմնադրամի ղեկավարի հետ հանդիպում, որի ընթացքում կհստակեցվեն այն ոլորտները, որոնց շրջանակներում կֆինանսավորվեն գիտական ծրագրեր: Պայմանագիր է ստորագրվել նաև ԼՂՀ-ի հետ, ինչի շնորհիվ արցախցի գիտնականները ևս իրավունք կստանան մասնակցելու Հայաստանում հայտարարված մրցույթներին և շահելու ծրագրեր: Հանրապետության գիտնականների հեղինակությամբ և համահեղինակությամբ իրականացվել են

միջազգային բարձր մակարդակին համապատասխանող մի շարք աշխատանքներ, որոնք հրապարակվել են հեղինակավոր գիտական ամսագրերում:

2010 թ. էապես ավելացել են տնտեսական ծախսերը: Մինչև **2007 թ.** հետազոտական հիմնարկների տնտեսական ծախսերը **12-13** տոկոս էին, ինչը խորհրդանշական գումար էր և թույլ չէր տալիս ջեռուցման խնդիրները հոգալ: Այսօր հաջողվել է հետազոտական հիմնարկների տնտեսական ծախսերը դարձնել **25-30** տոկոս:

Ս. Հարությունյանը ձևակերպեց գիտության ոլորտի տեսլականը, համաձայն որի՝ **2020** թվականին ՀՀ-ն կլինի գիտելիքահենք տնտեսություն ունեցող, հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների ու մշակումների մակարդակով եվրոպական գիտատեխնիկական տարածքում մրցունակ երկիր:

Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության թիրախներից է գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի կայուն աճի ապահովումը, գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքի արդիականացումը: Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել իրավական, տնտեսական և կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ երիտասարդ կադրերի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար: Բացի այդ, պետք է իրականացնել ասպիրանտական կրթության բովանդակային բարեփոխումներ, մշակել ատենախոսությունների գիտական մակարդակի բարձրացմանը նպաստող մեխանիզմներ և ներդնել գիտական աստիճանաշնորհման առավել արդյունավետ համակարգ: Ընդ որում, այդ միջոցառումները պետք է զուգակցվեն երիտասարդ գիտնականների սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ աշխատանքի վարձատրության պայմանների բարելավմամբ: Գիտության պետական կոմիտեի ղեկավարը տեղեկացրեց, որ վերջին տարիներին գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող **22-33** տարեկանների թվաքանակն էապես աճել է: Առաջին հայացքից թվում է, թե երիտասարդ թարմ շունչ է մտնում գիտության ոլորտ, սակայն իրական պատկերն այլ է: Երիտասարդները պաշտպանում են թեկնածուական աստիճան, սակայն գիտության մեջ չեն մտնում: Ընդ որում, եթե, օրինակ, ֆիզիկամաթեմատիկական, կենսաբանության ոլորտներում գիտական աստիճան ստացած մարդկանց ավելի քան **50** տոկոսը շարունակում է զբաղվել գիտությամբ, ապա այլ ոլորտներում (բժշկագիտություն, դեղագործություն, տնտեսագիտություն) գիտական աստիճան ստացածների շատ քիչ տոկոսն է մնում գիտության մեջ: Մասնավորապես **1994-2008 թթ.** տնտեսագիտության ոլորտում գիտական աստիճան է ստացել ավելի քան **800** մասնագետ, սակայն մոտ **100-ն** են մտել գիտության կամ կրթության ոլորտ աշխատելու: Գիտության մեջ ընդգրկված գիտության թեկնածուի միջին տարիքը Հայաստանում **52-53** է, դոկտորներինը մոտենում է **70-ի**: Օրինակ, գյուղատնտեսության ոլորտում դոկտորների միջին տարիքը **72** է: Ըստ Ս. Հարությունյանի՝ մեզանում գիտության ծերացում է նկատվում, թեև պաշտպանողների թիվն աստիճանաբար աճում է: Նա նշեց նաև, որ թեկնածուական ատենախոսությունների որակը բավականին ցածր է: Նշենք, որ գիտաժողովին հրավիրված էին ոլորտին առնչվող կառավարական մարմինների, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, գիտատեխնիկական կազմակերպությունների և բուհերի ներկայացուցիչներ, ովքեր հանդես եկան ելույթներով և բազմաթիվ առաջարկներով:

Լիլիթ ԳՐԻԳՈՐՅԱՆ